ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՀԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

(Երկրորդ աշխատաժողով, Երևան, 2023թ. փետրվարի 9)

Ակնարկ գիտաժողովի մասին

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում 2023 թվականի փետրվարի 9-ին տեղի ունեցավ «Հայաստան-Իրան հարաբերություններն ընդհանուր շահերի համատեքստում» խորագրով աշխատաժողով, որը նվիրված էր Հայաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 31-րդ տարեդարձին:

Գիտաժողովում բացման խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն պ.գ.թ. Ռ. Ղազարյանը, ՀՀ-ում ԻԻՀ նախկին արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրին:

Քանի որ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը փորձում է համագործակցել բոլոր շահագրգիռ կառույցների հետ, այս աշխատաժողովի շրջանակներում առաջին անգամ Ինստիտուտը համագործակցեց ՀՀ Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ-ի Օրբելի վերլուծական կենտրոնի հետ: Կառույցի համակարգող Միքայել Յալանուզյանը ներկայացրեց իրենց կառույցի աշխատանքներն իրանական ուղղությամբ և արձանագրեց նմանատիպ աշխատաժողովների իրականացման կարևորությունը: Ըստ Յալանուզյանի՝ «2020 թ. հետո, երբ Հայաստանը ապրում էր ծանր օրեր, մենք տեսանք Իրանի վճռական ու քաղաքական աջակցությունը, և մենք բարձր ենք գնահատում մեր դարավոր բարեկամի օգնությունը»:

Գիտական առաջին զեկույցով հանդես եկավ Իրանում ՀՀ նախկին արտակարգ և լիազոր դեսպան (2009-2014 թթ.) Գրիգոր Առաքելյանը՝ «Նախիջևանը հայ-իրանական հարաբերությունների համատեքստում» թեմայով և նկարագրեց, թե ինչպես է հայկական Նախիջևանը ապօրինաբար մաս դարձել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Իր

զեկույցում նա նշեց, որ մինչև 1934 թ. Նախիջևանը սահմանակցել է միայն Հայաստանին և Իրանին, սակայն Իրանի շահ Ռեզա Փահլավիի իրականացրած անհեռատես քաղաքականության արդյունքում Նախիջևանին հարող իրանական 8 կմ հատվածը հանձնվեց Թուրքիային: Ռեզա շահը չէր էլ պատկերացնի, որ իր այս անհեռատես քաղաքականության շնորհիվ 21-րդ դարի սկզբին կակտիվանա թուրանական միջանցք բացելու վտանգավոր գործընթացը, և Իրանը ստիպված կլինի մատնացույց անել իր կարմիր գծերը տարածաշրջանում: Սակայն ուշագրավ էր, որ ըստ Առաքելյանի՝ շահը միայն տարածքներ չի փոխանակել, այլև այդ ծրագիրը իրականացնելու համար՝ Քեմալ Աթաթյուրքի անձնական դրամական միջոցներից գումար է ստացել:

Հաջորդ զեկույցով հանդես եկավ ՀՀ արտաքին գործերի նախարարության Սահմանակից երկրների վարչության խորհրդական Գրիգոր Մելքոնյանը՝ «Հայաստան-Իրան քաղաքական հարաբերությունների վերջին զարգացումների շուրջ» թեմայով: Նա ներկայացրեց վերջին շրջանում տեղի ունեցած երկկողմանի այցերը, դրանց արդյունքները, Իրանի կառավարության պաշտոնական մոտեցումը, ըստ որի՝ «Հայաստանի Հանրապետության անվտանգությունը համարվում է տարածաշրջանի անվտանգությունը, ԻԻՀ քաղաքականությունը հիմնված է ՀՀ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության վրա»:

Ելույթով հանդես եկավ նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ Գոհար Իսկանդարյանը՝ «Հայաստանի ու Իրանի մոտեցումները տարածաշրջանային նոր մարտահրավերներին» թեմայով: Բանախոսն իր ելույթում

անդրադարձավ Արցախյան վերջին պատերազմի ընթացքում և պատերազմի ավարտին տարածարջանում առաջացած խնդիրներին և դրանց շուրջն Իրանի ունեցած մոտեցումներին: Թեպետ Իրանը վերջին 30 տարիների ընթացքում փորձել է բալանսավորված քաղաքականություն իրականացնել Հարավային Կովկասում, սակայն դա չի գնահատվել Ադրբեջանի կողմից: Ադրբեջանը ցանկացել է, որ Իրանը միանա թուրք-ադրբեջանական տանդեմին, շրջափակի և օր առաջ ծնկի բերի Հայաստանը: Չնայած Ադրբեջանի ցանկություններին Իրանը չի գնացել այս ճանապարհով: Բանախոսը նշեց, որ այսօր թեպետ Հայաստանն Իրանի հետ չունի ռազմական համագործակցության պայմանագիր, սակայն Իրանն այսօր Հայաստանի բնական դաշնակիցն է, և երկու երկրների պետական շահերը համընկնում են: Գ. Իսկանդարյանը ներկայացրեց նաև Իրանի ու Ադրբեջանի միջև աճող լարվածությունը:

Ելույթով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի գիտաշխատող Արմեն Իսրայելյանը՝ «Նախիջևանի միջանցքի գործարկման հարցում Իրանի և Ադրբեջանի ակնկալիքների շուրջ» թեմայով, որտեղ ի մասնավորի ներկայացրեց 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Իրանի տարածքով Ադրբեջանի և Նախիջևանի միջև հաղորդակցության նոր ճանապարհի, Արաքս գետի վրա կամուրջներ և նոր անցակետ կառուցելու շուրջ Իրանի և Ադրբեջանի ռազմաքաղաքական և տնտեսական ոլորտների բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցերի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների ու դրանց կատարման ընթացքի մասին: Նա նաև ներկայացրեց Նախիջևանի ճանապարհի գործարկման հարցում Իրանի և Ադրբեջանի

ակնկալիքները, գնահատեց ներկայումս Թեհրանի և Բաքվի հարաբերություններում առաջացած ճգնաժամի ազդեցությունը՝ համատեղ նախագծերի իրականացման վրա:

Հաջորդ բանախոսն էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Միջազգային հարաբերությունների բաժնի ավագ գիտաշխատող Արմեն Մանվելյանը, ով ելույթ ունեցավ «Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության շուրջ» թեմայով: Նրա ելույթի հիմնական գաղափարն էր, որ անհրաժեշտ է օգտագործել ստեղծված իրավիճակը Հայաստանում էներգետիկ հաբ ստեղծելու ուղղությամբ, որի շնորհիվ Հայաստանը կարող է անհրաժեշտության դեպքում ձմռան ամիսներին էներգիա մատակարարել Վրաստան, իսկ ամռան ամիսներին՝ Իրան:

Աշխատաժողովի վերջին բանախոսն Օրբելի վերլուծական կենտրոնի հետազոտող Ժաննա Վարդանյանն էր, ում զեկուցման թեման էր ՝ «Իրանի դիրքորոշումը Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում և հետո»: Նա նշեց բոլոր այն իրադարձությունները, որոնք տեղ էին գտել Արցախյան պատերազմի ժամանակ և խոսեց Իրանի ջանքերի մասին 3+3 ծրագրով աշխատանքների իրականացման շուրջ: Ժ. Վարդանյանը ևս գտնում էր, որ Իրանի համար փորձում են ստեղծել տարածաշրջանային այնպիսի խնդիրներ, որպեսզի վերջինս հետ քայլ կատարի իր կարմիր գծերից, ինչն այս պահին դեռևս չի նկատվում:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կազմակերպած «Հայաստան-Իրան հարաբերություններն ընդհանուր շահերի համատեքստում» աշխատաժողովը ունեցավ մեծ հաջողություն: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի նման աշխատաժողովները, գիտաժողովները բացի ոլորտի

զարգացման նպատակից, ունեն նաև հանրությանը արժանահավատ ու գիտական տեղեկություն տրամադրելու առաքելություն:

Բոլոր զեկուցումների վերջում տեղի ունեցան հարց ու պատասխան և քննարկումներ: Բանախոսներին առաջարկվել է սեղմ ժամանակահատվածում ելույթները դարձնել գիտական հոդվածներ և տրամադրել Իրանի բաժնին, որոնք տեղադրված են ստորև: